

<p>Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին</p>		
0.1	Անվանումը	Առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշներ
0.2	Ոլորտը	Կազմակերպությունների ֆինանսներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	<p>Արմստատ Ֆինանսների վիճակագրության բաժին Բաժնի պետ Հայկուշ Տիտիզյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 583 049, Էլ. փոստ՝ <a href="mailto:haykush@armstat.am">haykush@armstat.am</a>, <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a></p>
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վեռաբերյալ:</p> <p>Ցուցանիշի հաշվառումն ունի երկար տարիների պատմություն և վարվում է 20-րդ դարի 90-ական թվականների սկզբից: Տարիների ընթացքում այն պարբերաբար կատարելագործվել է՝ միջազգային դասակարգումներին, միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտին, ցուցանիշների կազմին և այլ չափորոշիչներին համադրելիությունն ապահովելու նկատառումներով:</p>
0.5	Օգտագործողները և կիրառումը	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են Արմստատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժինը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների տարեկան տվյալները կիրառվում են ազգային հաշիվների համակարգի ցուցանիշների հաշվարկման համար (մասնավորապես՝ միջանկյալ սպառման հոլդինգային շահույթի/վնասի, նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխության հաշվարկների, առևտրային հավելագնի տոկոսի և կապիտալի համախառն կուտակման հաշվարկի համար):</p>
0.6	Տեղեկությունների աղբյուրները	<p>Տեղեկատվության հիմնական աղբյուրը վիճակագրական հաշվետվություններով իրավաբանական անձանցից տարեկան պարբերականությամբ հավաքվող տեղեկություններն են: Ընդ որում՝ տարեկան պարբերականությամբ հաշվետվություններ ներկայացնում են միայն Արմստատի վիճակագրական մոնիտորինգում ընդգրկված խոշոր և</p>

		միջին ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունները
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողներ) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	Ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշներն՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների հայաստանյան դասակարգչի (ՏԳՏԴ) մասնավորապես՝ հաշվետու տարվա ընթացքում արտադրանք, արտադրանքի, ապրանքների աշխատանքների և ծառայությունների արտադրության և իրացման ծախսեր, սուբսիդիաներ և հարկեր՝ կապված ընթացիկ գործունեության հետ պաշարներ հաշվետու տարվա սկզբի և վերջի դրությամբ, ինչպես նաև հիմնական և այլ գործունեության տեսակների համար թողարկման և արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արտադրության և իրացման ծախսերի մասին տեղեկատվություն:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><b>Հիմնական հասկացություններ</b></p> <p>«Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից հասույթ» կազմակերպության կողմից թողարկված արտադրանքի, ապրանքների կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացումից ստացվող հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի): Ընդ որում արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից հասույթի ճանաչման պահը որոշվում է գործունեության (գործարքի, փաստի) կատարման պահով՝ անկախ դրանց դիմաց ստացված վճարումներից:</p> <p>«Վերավաճառքի համար գնված ապրանքների վաճառքից հասույթ»-ը ոչ սեփական արտադրության ապրանքների վերավաճառքից առևտրի շրջանառությունն է, իսկ «այդ ապրանքների ձեռք բերման ծախսեր»-ը վերավաճառված ապրանքների ձեռք բերման արժեքը:</p> <p>«Արտադրանք, ապրանք, աշխատանքներ, ծառայություններ փոխանակված</p>

	<p>բարտերով» ներառում է կազմակերպության կողմից փոխանակությամբ իրացված արտադրանքի, ապրանքի, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների վերաբերյալ տվյալները, որոնց գնահատման համար հիմք են ընդունվում</p> <p>ա) սեփական արտադրության արտադրանք տրամադրելու դեպքում՝ տվյալ ամսում այլ գնորդներին (օգտագործողներին) այդ արտադրանքների իրացման միջին գները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ նախորդ ամսում այլ գնորդներին (օգտագործողներին) այդ արտադրանքների իրացման միջին գները, վերջիններիս բացակայության դեպքում՝ իրացված արտադրանքի փաստացի կամ նորմատիվային (պլանային) արտադրական ինքնարժեքը:</p> <p>բ) ոչ սեփական արտադրության ապրանքներ տրամադրելու դեպքում այդ ապրանքների ձեռքբերման գները:</p> <p>«Աշխատողներին բնաիրային ձևով տրված աշխատավարձ»-ներառում է գործատուի կողմից աշխատողներին աշխատանքի վարձատրության դիմաց տրվող արտադրանքի, աշխատանքների ծառայությունների, ներառյալ տվյալ կազմակերպության արտադրած արտադրանքի, մթերքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ տվյալները, ընդ որում՝ քաղաքացիների եկամուտների բնաիրային ձևով հաշվարկման համար հիմք է ընդունվում ա) և բ) կետերում նշվածը :</p> <p>«Այլ վճարումներ բնաիրային ձևով» ներառում է վարկերի մարման և վարկերի տոկոսների դիմաց տրամադրված արտադրանքի, ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալները:</p> <p>«Անհատույց փոխանցում»-ը բարեգործական նպատակներով (օգնություն, նվիրատվություն) կազմակերպություններին, ինչպես նաև քաղաքացիներին տրամադրված արտադրանքը, ապրանքները, աշխատանքները և ծառայություններն են:</p> <p>«Արտադրանք օգտագործված կազմակերպության ներսում» դա մասնաճյուղերին, ներկայացչություն ներին, բաժանմունքներին և կազմակերպության առանձնացված հաշվեկշիռներ ունեցող այլ ստորաբաժանումներին միջանկյալ օգտագործման համար հատկացված արտադրանքն է:</p> <p>«Պատրաստի արտադրանքի պաշարների փոփոխություն» և «Անավարտ արտադրության և սեփական արտադրության կիսապատրաստուկների փոփոխություն»-ը պատրաստի արտադրանքի և անավարտ արտադրության հաշվետու ժամանակահատվածի վերջի և սկզբի մնացորդների տարբերությունն է: Նշված պաշարների փոփոխությունները պետք է գնահատվեն նրանց պահեստավորման պահին գոյություն ունեցող</p>
--	--

	<p>իրացման միջին գներով:</p> <p>«Այլ եկամուտներ»-ը բաժնետոմսերի և բաժնեմասերի իրացումից, տույժերի, տուգանքների և գույքային այլ պատժամիջոցների տեսքով, անվավեր ճանաչված գործարքներից, վարձակալությունից ստացվող եկամուտներն են:</p> <p>«Եկամուտներ վարձակալությունից»՝ կազմակերպությանը պատկանող հիմնական միջոցների վարձակալությունից ստացվող եկամուտներն են:</p> <p>«Վերավաճառքի համար գնված ապրանքների ձեռք բերման ծախսեր»՝ վերավաճառքի համար գնված ապրանքների ձեռքբերման արժեքն է փաստացի ձեռք բերման գներով:</p> <p>«Հումք և նյութեր, գնովի կիսապատրաստուկներ, համալրող շինվածքներ և դետալներ», «Վառելիք», «Էներգիա» և «Ջուր» արտադրական գործունեության ընթացքում օգտագործված հումքի, նյութերի, բնական պաշարների, ընդերքի, կիսապատրաստուկների, համալրող շինվածքների, վառելիքի, էներգիայի և ջրի վերաբերյալ տվյալներն են սկզբնական արժեքով, որը ձևավորվում է նրանց փաստացի ձեռք բերման գներից (անհատույց ստացվածները ընդունման-հանձնման փաստաթղթերի տվյալներով և, եթե այդ փաստաթղթերում նշված չէ դրանց արժեքը, ապա այն գնահատվում է կազմակերպությունում առկա համանման նյութերի արժեքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ փորձաքննության եղանակով որոշված արժեքով) և մինչև պահեստ տեղափոխման, փոխադրման հետ կապված բոլոր ծախսերից «Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ (ներառյալ խթանող և փոխհատուցող վճարները)»՝ ներառում է ինչպես հիմնական արտադրական և ոչ արտադրական անձնակազմի, այնպես էլ պայմանագրային աշխատողների կողմից փաստացի կատարված աշխատանքների դիմաց հաշվարկված աշխատավարձը, ներառյալ խթանող և փոխհատուցող վճարները:</p> <p>Խթանող վճարներ են համարվում, մասնավորապես, արտադրական ցուցանիշների, տարվա աշխատանքի արդյունքների համար պարգևատրումները, մասնագիտական հմտության համար տրվող հավելումները, երկարամյա ծառայության համար արտադրական աշխատողներին տրվող միանվագ պարգևատրումները (տվյալ տնտեսությունում մասնագիտության գծով աշխատանքային ստաժի համար հավել «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով սոցիալական վճարները, պետական սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանսավորման նպատակով ապահովադիրների կողմից պարտադիր կարգով վճարվող միջոցները:</p> <p>«Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ»-ը ՀՀ</p>
--	---

օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով սոցիալական վճարներն են՝ պետական սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանսավորման նպատակով ապահովադիրների կողմից պարտադիր կարգով վճարվող միջոցները:

«Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ»՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող, ինչպես նաև երկարաժամկետ վարձակալված հիմնական միջոցների ամորտիզացիայի (մաշվածության) գծով ծախսերը, որի մեծությունը որոշվում է՝ ելնելով դրանց լրիվ վերականգնման համար օրենսդրությամբ սահմանված ամորտիզացիոն մասհանումների նորմաներից:

«Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումներ»՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող ոչ նյութական ակտիվների մաշվածության գծով ծախսերը, որը պետք է պարբերաբար բաշխվի նրա լավագույն գնահատականի վրա որոշված օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի որոշման անհնարինության դեպքում նրա մաշվածության նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի, սակայն ոչ ավելի քան կազմակերպության գործունեության ժամկետն է:

«Վարձակալման վճարներ»-ը կազմակերպության կողմից հիմնական միջոցների դիմաց վարձավճարները և վարձակալության հետ կապված այլ ծախսերն են:

«Ապահովագրական վճարներ»-ը դա որպես ապահովադիր հանդես եկող կազմակերպության ապահովագրության նպատակով մուծված ապահովագրավճարների գումարներն են, որից՝

«Գույքի ապահովագրություն» գույքի ապահովագրության նպատակով մուծված ապահովագրավճարների գումարներն են (բացառությամբ՝ նյութական ռեսուրսների սկզբնական արժեքի ձևավորմանը մասնակցող դրանց տեղափոխման հետ կապված ապահովագրավճարները):

«Ներկայացուցչական ծախսեր»՝ կազմակերպության կողմից փոխշահավետ համագործակցություն հաստատելու և պահպանելու նպատակով բանակցություններ վարելու համար այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին (ներառյալ օտարերկրյա) և անհատ ձեռնարկատերերին պաշտոնական ընդունելության և սպասարկման ծախսեր:

«Գործուղման ծախսեր»-ը դա կազմակերպության աշխատողներին (կազմակերպությունում աշխատանքային պայմանագրով աշխատող ֆիզիկական անձանց) աշխատանքի մշտական վայրից (քաղաք, գյուղ և այլն) դուրս որոշակի ժամկետով այլ վայրում հանձնարարություն կատարելու համար տրվող վճարներն են, որից՝ «Օրապահիկի ծախսեր»-ը

	<p>գործուղման ծախսերից օրապահիկի համար հատկացված վճարներն են:</p> <p>«Ինքնարժեքի մեջ մտնող հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ» չփոխհատուցվող հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ»-ը դա ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինքնարժեքի մեջ մտնող (չփոխհատուցվող) հարկերը (բացառությամբ՝ ներմուծման համար սահմանված մաքսատուրքերի) և այլ պարտադիր վճարներն են (բյուջե վճարվող բնական պաշարների և ընդերքի օգտագործման դիմաց վճարներ, հողի հարկ, գույքահարկ և այլ հարկեր և բյուջե վճարվող այլ պարտադիր վճարներն են):</p> <p>«Սոցիալական նպաստներ կազմակերպության միջոցների հաշվին» ներառում է փոխման հետ կապված աշխատանքից ազատվող աշխատողներին (կազմակերպության լուծարման աշխատողների թվաքանակի, հաստիքների կրճատման, ինչպես նաև արտադրությունում դժբախտ պատահարների կամ մասնագիտական հիվանդության հետևանքով աշխատանքից ազատման դեպքում) տրվող ելքի նպաստները:</p> <p>«Բարեգործական նպատակների համար ծախսեր»-ը բարեգործական նպատակներով հասարակական, կրոնական և բացառապես բարեգործական նպատակներով հիմնված և գործող այլ կազմակերպություններին տրամադրված արտադրանքի, ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայություններն են, ընդ որում կատարված ծախսերը արտացոլվում են ինքնարժեքի չափով:</p> <p>«Այլ կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների և ծառայությունների վճարներ»-ը կողմնակի կազմակերպությունների կողմից այլ ծառայությունների հետ կապված ընդամենը ծախսերն են:</p> <p>«Այլ ծախսեր»-ը ուրիշ խմբավորումների մեջ չմտած արտադրության և իրացման ծախսերն են:</p> <p>«Ընդամենը ծախսերից կողմնակի կազմակերպությունների կողմից և տնտեսվարման եղանակով կատարված կապիտալ վերանորոգման ծախսեր»-ը ներառում է կողմնակի կազմակերպությունների կողմից, ինչպես նաև տնտեսվարման եղանակով կատարված կապիտալ վերանորոգման ծախսերի գումարը, «Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսեր (նեոառյալ՝ կրթաթոշակները)»-ը ներառում է կադրերի պատրաստման և վերապատրաստման համար ծախսերը՝ ներառյալ կրթաթոշակների հետ կապված ծախսերը:</p> <p>Կադրերի պատրաստման ծախսեր են համարվում առկա արտադրական գործընթացներին և ընթացակարգերին, աշխատանքի կազմակերպման եղանակներին կամ մեթոդներին տիրապետելու համապատասխան որակավորում ապահովելու նպատակով հատուկ դասընթացներին աշխատողների մասնակցության համար կազմակերպության կողմից</p>
--	---

կատարած ծախսերը (դասընթացի արժեքը): Կադրերի վերապարտաստման ծախսեր են համարվում արտադրական նոր գործընթացների և ընթացակարգերի յուրացման, աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված այլ եղանակների և մեթոդների ներդրման նպատակով որակավորման հատուկ դասընթացներին աշխատողների մասնակցության համար կազմակերպության կողմից կատարած ծախսերը (դասընթացի արժեքը): «Սոցիալական զարգացման ծախսեր»՝ սոցիալ-մշակութային օբյեկտների, շինարարության և դրանց պահպանման վրա կատարված ծախսեր:

«Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը»-ը աշխատողների միջին ցուցակային թվաքանակն է, որը հաշվարկվում է ամսվա համար յուրաքանչյուր օրվա ցուցակային կազմի աշխատողների թվաքանակի գումարը, ներառյալ տոն (ոչ աշխատանքային) և հանգստյան օրերը, հաշվետու ամսվա օրացույցային օրերի վրա բաժանելով:

«Սուբսիդիաներ բյուջեից»՝ կազմակերպությանը սուբսիդիաների տեսքով անհատույց տրամադրված պետական աջակցության ծավալն է:

«Հարկեր»-ում ներառվում են կազմակերպության կողմից բյուջե վճարման ենթակա հաշվարկված ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, և այլ հարկերի գումարները:

«Պաշարները» կազմակերպությանը պատկանող (այդ թվում՝ ճանապարհին և վերամշակման մեջ գտնվող) ապրանքների, նյութերի և օժանդակ միջոցների, արագամաշ առարկաների, անավարտ արտադրության, պատրաստի արտադրանքի և այլ պաշարների մնացորդների հանրագումարն է:

Պաշարները պետք է չափվեն ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

**Ճյուղային ընդգրկունություն**

Վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ գործունեության տեսակները:

**Աշխարհագրական ընդգրկունություն**

Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:

**Հրապարակման խմբավորումներ**

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ. 2)՝ բոլոր խմբավորումներով:

2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տվյալները տրամադրվում են Արմատառի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնին հաշվետվության ներկայացման ժամանակաշրջանին հաջորդող 80-րդ օրը տվյալները հրապարակվում հաշվետու տարվան հաջորդող տարվա օգոստոսի 31-ին:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Հիմնական տեղեկատվությունը հավաքվում է իրավաբանական անձանցից, ընդ որում 30 և ավելի աշխատողներ ունեցող և/կամ 1մլրդ-ը գերազանցող հասույթ ունեցող կազմակերպությունները (թվով 1300) համատարած կերպով ընդգրկվում են տարեկան վիճակագրական հաշվետվություն ներկայացնողների ցանկում, ինչն ապահովում է ճշգրտության բարձր աստիճան: Մյուս կազմակերպություններից տեղեկատվությունը հավաքվում է ընտրանքային կարգով: Ընտրանքի իրականացման համար գլխավոր համակցության ձևավորման նպատակով կիրառվում է վիճակագրական բիզնես ռեգիստրը: Ընտրանքը ստրատիֆիկացված է ըստ գործունեության տեսակների և աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և, առկա ռեսուրսներով պայմանավորված կազմում է 1000 միավոր: Այսպիսով տեղեկատվությունը հավաքվում է ընդհանուր առմամբ 2300 իրավաբանական անձանցից:
3.2	Անճշտության աղբյուրները	Դիտարկման ընթացքում առաջացող աճշտությունների աղբյուր կարող են հանդիսանա ընտրանքի սխալը, տեղեկություն տրամադրողների կողմից պատասխանների բացակայությունը, բիզնես ռեգիստրում առկա տեղեկատվության անճշտությունները (գործունեության տեսակի ոչ ճիշտ որոշումը կամ դրա փոփոխությունը տարվա ընթացքում) և այլն: Սահմանված ժամկետում վիճակագրական տվյալների չներկայացման դեպքում կրկնվում են նախորդ ժամանակաշրջանի տվյալները: Իսկ պաշարների տարվա սկզբի մնացորդների վերաբերյալ տվյալները ճշգրտվում են նախորդ տարվա վերջի մնացորդի հետ համեմատությամբ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Պատասխանների մակարդակը կազմում է մոտ 98%, ընտրանքի սխալի չափը չի գերազանցում 5%:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 1998թ.-ը ցուցանիշը ներկայացվել է Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչին (ԺՏՃՀԴ) համապատասխան: 1998-2001թթ. կիրառվել է Միջազգային ստանդարտ ճյուղային դասակարգչի (ՄՍՃԴ) 3-րդ խմբագրությունը (ՄՍԿ):



		Սկսած 2002թ.- ից ցուցանիշը ներկայացվում է Տնտեսական գործունեության տեսակների Հայաստան դասակարգչին համապատասխան (մշակված Եվրոպական համայնքների վիճակագրական ծառայության կողմից հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ NACE հիման վրա): 2010թ.-ից կիրառվում է SԳՏՀԴ խմբ.2- ր:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա չէ :
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Նախնական ամփոփված տվյալները վերանայվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա:
<b>5 .Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	<p><b>Հրապարակումներ</b></p> <p>Տարեկան հրապարակումներ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): <b>Տվյալների բազա</b></p> <p><a href="http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a></p> <p><b>Ինտերնետային հասցե</b> Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82:</a></p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են</p> <p>Իրավաբանական անձանց համար.</p> <p>ա/ իրավաբանական անձի ծածկագիրը</p> <p>բ/ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),</p> <p>գ/ պետական ռեգիստրում գրանցման համարը,</p> <p>դ/ իրավաբանական անձի լրիվ անվանումը,</p> <p>ե/ կազմակերպական-իրավական ձևը</p> <p>զ/ իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, ինչպես նաև հայեցողական կարգով՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստի հասցեն,</p> <p>է/ գործունեության հիմնական տեսակը,</p> <p>ը/ արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների</p>

		իրացումից ստացված զուտ հասույթը (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի), թ/ աշխատողների միջին ցուցակային թվաքանակը:
5.3	Այլ տեղեկատվություն	Կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ ցուցանիշների հաշվարկման առավել մանրամասն տեղեկատվությունը զետեղված է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ նոյեմբերի 30-ի «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-SԳ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 76-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ում: Մեթոդաբանական պարզաբանումներ են առկա նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում»:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373:</a>